Կանթեղ կրթական-բարեգործական ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա- Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

Կազմող- Ծ. Քոչոյան

Խումբ՝ Աշխարհագրություն

2022թ.

Բովանդակություն

Ներածություն…… 2

Ծնող- ուսուցիչ համագործակցության ուղիները…… 4

Աշխարհագրության դասերին ծնողներին ներգրավվելու մեթոդները…… 9

Դպրոց-ծնող փոխազդեցությունը…… 10

Միջազգային փորձը դպրոց – ծնող համագործակցության գործում…… 16

Եզրակացություն…… 19

Օգտագործված գրականության ցանկ…… 21

Ներածություն

«Մեր երեխաները մեր ծերությունն են: Ճիշտ դաստիարակությունը, մեր երջանիկ ծերությունն է, վատ դաստիարակությունը՝ մեր ապագա վիշտը, մեր արտասուքները, դա մեր հանցանքն է մյուս մարդկանց առջև, ամբողջ երկրի առջև»: Վ.Ա.Սուխոմլինսկի :

Մեր հասարակության, դպրոցի և ծնողների միասնական նպատակն է կարողանանք ձևավորել կյանքի լայն իմացություն և տաղանդ ունեցող անհատականություն, ճիշտ դաստիարակության միջոցով «դաստիարակել» ու կերտել երկրի, ինչու չէ նաև աշխարհի ապագա պատմությանը համապատասխան անհատականություն:

Սովորողների հետ աշխատանքը արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ է ընտանիքի հետ սերտ համագործակցություն ստեղծել: Դպրոցը երեխային տալիս է գիտական գիտելիքներ , որոնց շնորհիվ երեխայի մոտ ձևավորվում է գիտակցական վերաբերմունք իրականության նկատմամբ:Ընտանիքն էլ իր հերթին ապահովում է կյանքի պրակտիկ փորձը: Ընտանիքում ձևավորվում և մշակվում են մարդկանց կարեկցելու կարողությունը: Անձի ներդաշնակ զարգացման համար այդ երկու որակներն էլ խիստ անհրաժեշտ են:

Ժամանակակից աշխարհում ընտանիքը և նրա սոցիալ-տնտեսական բարեկեցությունը համարվում են ամուր պետության և առողջ հասարակության գրավականներ: Դրանով պայմանավորված, այսօր հանրության շրջանում մեծ արդիականություն են վայելում ծնողների մանկավարժական իրազեկման հետ կապված տարատեսակ հիմնահարցերը: Եթե դպրոցն ու ծնողները հաջողությամբ համագործակցում են, ապա հաղթանակն ապահովված է: Դաստիարակությունը հաջողությամբ է պսակվում,եթե ընտանիքի հետ տարվող աշխատանքը և երեխայի դաստիարակությունը կատարվում են միաժամանակ:

Ուսումնասիրության նպատակին հասնելու համար կանդրադառնամ հետևյալ խնդիրներին.

- ծնող- ուսուցիչ համագործակցության ուղիները
- միջազգային փորձը դպրոց – ծնող համագործակցության գործում
- աշխարհագրության դասերին ծնողներին ներգրավելու մեթոդները
- դպրոց-ծնող փոխազդեցությունը։

Ծնող – ուսուցիչ համագործակցության ուղիները

Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը ուսուցիչների և ծնողների միջև փոխհարաբերությունն է՝ նրանց համատեղ գործունեության և հաղորդակցության գործընթացում: Արդյունքում երկու կողմերն էլ զարգացնում են շահագրգռվածություն՝միասնական նպատակին հասնելու համար: Հետևաբար, դպրոցի և ընտանիքի փոխազդեցությունը նրանց զարգացման աղբյուրը և կարևոր մեխանիզմն է: Ժամանակակից մանկավարժության և հասարակության մեջ շրջանառվող թևավոր խոսքերից է դարձել. «Երեխաների հետ աշխատելն ավելի հեշտ է , քան նրանց ծնողների » արտահայտությունը:

Իրականում արհեստավարժ, խելամիտ մանկավարժը կարող է տարբեր մեթոդներով շատ արդյունավետ կերպով աշխատել նաև ծնողների հետ:

Երեխայի կյանքը բաղկացած է երկու կարևոր ոլորտներից՝ դպրոցից և ընտանիքից, որոնք ենթակա են փոփոխության և զարգացման: : Ուստի կարևոր և հրատապ խնդիրներից է դպրոցի և ընտանիքի համագործակցությունը: Հասարակության զարգացման ներկա փուլում ընտանեկան ու բարոյական արժեքների որոշակի փոփոխություն է նկատվում, որը երբեմն դժվարեցնում է այդ համագործակցությունը:

Կրթության խնդիրների հաջող լուծումը հնարավոր է միայն ընտանիքի և դպրոցի փոխգործակցության դեպքում:
Ընտանիքի և դպրոցի համագործակցությունը գնալով ավելի արդիական և պահանջված է դառնում: Երկու կողմերն էլ ներկայացնում են իրենց սեփական, երբեմն արդարացի պահանջները: Հաճախ են ուսուցիչները բողոքում են ծնողների անտարբերությունից, երեխաների վատ դաստիարակությունից, երեխաների և ծնողների պասիվությունից: Ծնողները, իրենց հերթին, դժգոհում են ավելորդ ծանրաբեռնվածությունից, ուսուցչի անտարբերությունից:

Ինչպես գրում է ռուս մեծ ուսուցիչ Վ. Սուխոմլինսկին. «Ընտանիքում արմատներ են գցվում, որոնցից հետո աճում են ճյուղեր, ծաղիկներ և պտուղներ: Դպրոցի

մանկավարժական իմաստությունը կառուցված է ընտանիքի բարոյական առողջության վրա»:

Բարեփոխումների շրջանում կրթական համակարգն այնքան արագ է փոխվում, որ ծնողները հաճախ չեն հասկանում այդ փոփոխությունները՝ ուսուցման և կրթական գործունեության մեջ կողմնորոշվելով հիմնականում իրենց դպրոցական փորձի համաձայն, որը հաճախ հետ է մնում ժամանակակից պահանջներից: Այս անհամապատասխանությունը լուծելու համար ուսուցիչը պետք է ծնողների համար հնարավորինս բաց, տեղեկացված և հասանելի դարձնի ուսումնական գործընթացը: Դպրոցում աշխատանքային պրակտիկան ցույց է տալիս, որ ծնողները սկսում են ձգտել ակտիվ համագործակցության դպրոցի և ուսուցչի հետ, եթե նրանց միջև փոխըմբռնում է ձևավորվում: Եվ դա ծնվում է համատեղ գործունեության ընթացքում: Ուստի ուսուցիչը պետք է դառնա ընտանիքի և դպրոցի միջև համագործ ակցության կազմակերպիչը: Այս ուղղությամբ ուսուցիչների անելիքները շատ են: Նրանք պետք է կարողանան խթանել դասարանի ծնողների համատեղ, համերաշխ աշխատանքը: Ծնողն էլ իր հերթին պետք է կարևորի ընտանիքում երեխայի համար հարմարավետ պայմաններ ստեղծելը, աջակցի երեխային հարմարվել դպրոցական միջավայրին, ընկերներին, ուսուցիչներին:ինչպես նաև իրականացնել ընտանիքի համապարփակ և համակարգված ուսումնասիրություն, դիտարկել և գնահատել ընտանեկան դաստիարակության առանձնահատկությունները:

«Ուսուցիչ-ծնողներ» հարաբերությունները կարող են գոյություն ունենալ և ձևավորվել որոշակի ձևով և առանց դրանց մասնակիցների միջև անմիջական շփումների: Այս դեպքում երեխան դառնում է կապող օղակ:

Սակայն ծնողների և դպրոցի միջև կապի բացակայությունը, ինչպես նաև դպրոցի ու ծնողների չհամաձայնեցված գործողությունները վնասում են երեխայի կրթությանն ու դաստիարակությանը:

Ուսուցիչը երկարատև և համառ աշխատանքի միջոցով կարող է հասնել նրան, որ սովորողների ծնողների մոտ ամրանա պատասխանատվության զգացումը երեխաների կրթության և դաստիարակության, նրանց հոգեբանական և համակողմանի զարգացման

գործում ծնողն ավելի ակտիվորեն կօժանդակի դպրոցի աշխատանքին, որն ի վերջո ուղղված է սովորողի կրթության որակի բարձրացմանը։

Ուսուցչի աշխատանքը պետք է լինի անընդհատ, մշտական հետևյալ ուղղություններով.

- երեխաների կրթության և դաստիարակության, նրանց հոգեբանական և համակողմանի զարգացման գործում ծնողների պատասխանատվության մեծացում,
- ծնողների հետ մանկավարժական կապերի ակտիվ և մշտական որոնում,
- երեխաների կարողությունների և նրանց վարքի անզգույշ և անհիմն գնահատման կանխարգելում, ծնողական զգացմունքների նկատմամբ հարգալից վերաբերմունք,
- ծնողների հեղինակության բարձրացում երեխաների աչքում (երեխաներին ցույց տալ իրենց ծնողների ամենաարժեքավոր հատկությունները, հաշվի առնելով ծնողների այս հատկություններն ու կարողությունները մանկավարժական գործունեության մեջ),
- անհրաժեշտ պահանջները ծնողներին ներկայացնելիս (կարևոր է մեր պարտականությունները նրանց վրա չփոխանցել),
- համբերություն՝ ուսուցչական անձնակազմի հասցեին քննադատական հայտարարություններ ստանալիս,
- ծնողական զգացմունքների նկատմամբ հարգալից վերաբերմունք, երեխաների կարողությունների և նրանց վարքի անզգույշ և անհիմն գնահատման կանխարգելում։

Ակնհայտ է դպրոցի և ընտանիքի փոխգործակցության անհրաժեշտությունն ու կարևորությունը: Ընտանիքը պետք է լինի համախոհների թիմ և գործի դպրոցին համապատասխան, հետևաբար ուսուցիչների հիմնական խնդիրները հետևյալն են.

- ծնողներին սովորեցնել մեծահասակների և երեխաների, ընտանիքի անդամների ուսուցման տեխնիկան, մեթոդները և ոճը,
- նպաստել դրական և բացասական իրավիճակների մասին իրազեկմանը:

Սոցիալական և հոգեբանական ապահովությունը, երեխայի ձեռքբերումների հաջողությունը կախված է նրանից, թե ով և ինչպես է ազդում նրա զարգացման վրա: Երեխան ժամանակի մեծ մասն անցկացնում է դպրոցում և տանը, հետևաբար կարևոր է, որ ուսուցիչների և ծնողների ազդեցությունները չհակասեն միմյանց, այլ դրական և ակտիվ ընկալվեն երեխայի կողմից:

Դա իրագործելի է, եթե ուսուցիչներն ու ծնողները դառնան դաշնակիցներ ու համախոհներ՝ դաստիարակության խնդիրների շահագրգիռ ու համակարգված լուծումներով:

Ընտանիքի հետ փոխգործակցությունը դպրոցի և յուրաքանչյուր ուսուցչի աշխատանքում հրատապ և բարդ խնդիրներից է:

Ընտանիքները շատ տարբեր են, յուրաքանչյուրն ունի իր խն դիրներն ու դժվարությունները, ուստի հնարավոր չէ պատրաստի և միակ ճիշտ պատասխանը տալ այն հարցին, թե ինչպես շփվել ընտանիքի հետ:

Շատ բան կախված է ուսուցչի ինտուիցիայից, հմտությունից, որպեսզի կարողանա ճիշտ որոշում կայացնի որոշակի իրավիճակում ծնողների և երեխայի հետ շփվելու մեթոդների և միջոցների ընտրության հարցում:

Երեխայի դաստիարակության համար հիմնական պատասխանատվությունը կրում են ծնողները: Ծնողական խնամքից զրկված, ինչպես նաև անբարենպաստ պայմաններով ընտանիքների երեխաների դաստիարակության պատասխանատվությունը կրում են տեղական ինքնակառավարման մարմինները և պետական կրթական ու խնամակալական հաստատությունները:

Կարևորելով երեխայի զարգացման և դաստիարակության հիմնախնդիրը, պետք է իրականացվեն մի շարք գործողություններ, որոնք ուղղված են ծնողների հետ աշխատանքին:

Առաջին հերթին պետք է մեծ աշխատանք կատարվի ծնողների կրթության կազմակերպման հարցում: Այդ աշխատանքի հնարավոր ձևերից են.

- սեմինարներ ծնողների համար
- քննարկումներ դասղեկի ժամերին, որոնք կարող են լինել երեխայի խնամքի և զարգացման առանձին հիմնախնդիրների մասին, որտեղ ծնողները փորձի փոխանակման միջոցով կմշակեն համատեղ արդյունավետ վարքի ձևեր։
- տեղեկատվական բրոշյուրների , գրքերի, փոքրածավալ նյութերի տարածում։
- հոգեբանամանկավարժական խորհրդատվություն, որն առավել անհատականացված ուղղություն կունենա։

Շատ արդյունավետ միջոց է ծնողների հետ անհատական զրույցը, երբ ծնողը զրույցի այլ մասնակիցների ներկայությունից չի կաշկանդվում, «ինքնապաշտպանության» չի դիմում, այլ անկեղծորեն քննարկում է առկա խնդիրը ։ Ծնողը և ուսուցիչը պետք է համոզվեն, որ իրենց համատեղ աշխատանքի հիմքում ընկած է երեխայի շահի գերակայությունը, որից ելնելով անհրաժեշտ է.

- հոգեբանական և մանկավարժական կրթության կազմակերպում՝ ուղղված ծնողների համար հրատապ և էական խնդիրների քննարկմանը,
- ծնողների ներգրավում երեխայի զարգացման հեռանկարները որոշելու և, համապատասխանաբար, գործողությունների ծրագրի մշակման գործում,
- ծնողների մասնակցություն երեխայի ձեռքբերումների, նրա դժվարությունների և խնդիրների վերլուծությանը,
- աջակցություն, երեխաների դաստիարակության գործում ծնողների հաջողության խրախուսում

Աշխարհագրության դասերին ծնողներին ներգրավելու մեթոդները

Աշխարհագրությունը յուրօրինակ գիտություն է այն առումով, որ առավել շատ է կապվում կյանքի հետ, ավելի պրակտիկ է ։

Աշխարհագրության ուսումնասիրման համար անհրաժեշտ են որոշակի պարագաներ, որոնցով անհրաժեշտ է , որ ծնողն ապահովի երեխային՝ ուսման պրոցեսն արդյունավետ դարձնելու համար։ Դրանք հատկապես վերաբերվում են ուրվագծային քարտեզներին, ատլասներին,այլ գրենական պիտույքներին։

Քանի որ աշխարհագրության ուսուցումը ենթադրում է տարբեր դաշտային աշխատանքներ, էքսկուրսիաներ , ուստի կարևոր է , որ ծնողը խրախուսի աշակերտի ներկայությունը, նպաստի դրանց իրագործմանը։

Ծնողները կարող են հնարավորության դեպքում նաև մասնակցել տարբեր արշավների, էքսկուրսիաների, նաև ներկա լինեն դրանց քննարկմանը։

Էքսկուրսիաներին ներգրավված ծնողներըմիշտ պնդում են, որ իրենք էլ ավելի մանրամասն ծանոթացան մեր երկրին, շատ բան սովորեցին։ Ամփոփումների ժամանակ ուղղում և ուղղություն են ցույց տալիս երեխաներին։

Ես երեխաներին հանձնարարել էի ծնողների օգնությամբ կազմել ՀՀ վարչական քարտեզը։ Յուրաքանչյուր խումբ պետք է կազմեր մի մարզի մակետ, հետո դասարանում երեխաները միացնելու էին իրար և ստանալու էին քարտեզը։ Նախօրոք մասշտաբը տվել էի։ Շատ հետաքրքիր աշխատանք ստացվեց։ Ծնողներն էլ էին շատ շահագրգռված, ոգևորված։ Երեխաները կազմել էին մարզերի բնութագիրը։ Ուսուցողական և հետաքրքիր աշխատանք էր ստացվել։

Երեխաները շատ հետաքրքրասեր են, շատ հարցասեր են, և կարևոր է, որ ծնողը կարողանա մինիմալ բավարարել նրա հետաքրքրությունը բնության վերաբերյալ հարցերի շուրջ: Վերջինս կարող է դիմել նաև ուսուցչին՝ այդ հարցերը մեկնաբանելու համար:

Ծնողի ամենամեծ օգնությունը կլինի նաև այն, որ երեխան դպրոցում ստացած բնապահապանական գիտելիքները ամրապնդի, սեփական օրինակով ցույց տա բնության պահպանության կարևորությունը:

Դպրոց-ծնող փոխազդեցությունը

Դպրոցի և ընտանիքի փոխազդեցության էությունը կայանում է նրանում, որ երկու կողմերն էլ պետք է շահագրգռված լինեն ուսումնասիրել երեխային, բացահայտել և զարգացնել նրա մեջ լավագույն որակները և հատկությունները: Նման փոխգործակցությունը հիմնված է փոխադարձ վստահության և հարգանքի, փոխադարձ աջակցության և օգնության, միմյանց նկատմամբ համբերության և հանդուրժողականության սկզբունքների վրա: Սա կօգնի ուսուցիչներին և ծնողներին միավորել իրենց ջանքերը երեխայի մեջ այն որակների և հատկությունների ձևավորման համար, որոնք անհրաժեշտ են նրա ինքնորոշման և ինքնիրացման, դժվարությունների հաղթահարման և ձախողման դեպքում ինքնավերականգնման համար:

Երեխաներին, ծնողներին, ուսուցիչներին միավորում են ընդհանուր մտահոգությունները, խնդիրները, որոնց լուծման արդյունքն էապես կախված է նրանց փոխգործակցության բնույթից: Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը դասղեկի նպատակաուղղված և երկարատև աշխատանքի արդյունքն է, որն առաջին հերթին ենթադրում է ընտանիքի, երեխայի ընտանեկան դաստիարակության

առանձնահատկությունների և պայմանների համակողմանի և համակարգված ուսումնասիրություն։ .

Ուսուցիչների փոխգործակցությունը ծնողների հետ ենթադրում է երեխայի համար միասնական պահանջների մշակում, կրթական առաջադրանքների սահմանում և ուսուցիչների և ծնողների համատեղ գործունեության կազմակերպում այդ խնդիրների իրականացման համար։

Այս աշխատանքը ենթադրում է միջոցառումներ.

Կրթական - ծնողներին սովորեցնել տեսնել և հասկանալ իրենց երեխաների հետ տեղի ունեցող փոփոխությունները.

Խորհրդատվական - սոցիալական և աշխատանքային հմտությունների ձեռքբերման գործընթացում երեխայի վրա արդյունավետ ազդեցության մեթոդների համատեղ հոգեբանական և մանկավարժական որոնում։

Երեխաներ դաստիարակելը մեկ խնդիր է ծնողների, մանկավարժների և հանրության ողջ համայնքի համար։ Համախմբվելով՝ կկարողանանք հասնել առաջադրված խնդիրներին, որպեսզի մեր երեխաները լինեն դաստիարակված, կիրթ, ունենան հստակ ձևավորված քաղաքացիական դիրքորոշումներ։

Աշակերտների ծնողները ոչ պակաս հետաքրքրված են դպրոցի հաջող աշխատանքով, քան ուսուցիչներն ու նրանց երեխաները։ Վերոնշյալ բոլորից կարելի է եզրակացնել, որ երեխայի անհատականության սոցիալականացման խնդրի լուծումն անհնար է առանց դպրոցի և ծնողների սերտ համագործակցության և ակտիվ փոխգործակցության։

ԸՆՏԱՆԻՔ – ԴՊՐՈՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԾԱՊԱՏԿԵՐ



ԳԾԱՊԱՏԿԵՐԻ ԲԱՑԱՏՐԱԳԻՐԸ

Մոդելի նպատակը ընտանիք-դպրոց համագործակցության խթանումն է: Այն նպաստում է դաստիարակչական միասնական տարածքի ստեղծմանն ու ընտանեկան և դպրացական դաստիարակության ինտեգրմանը և կարող է ներդրվել ներդպրոցական կառավարման համակարգում: Մոդելի հիմքում ընկած են երկու առանցքային սկզբունքներ.

Ծնողներն ու ուսուցիչները գիտակցում են, որ ա/ աշակերտն է իր զարգացման սուբյեկտը, իսկ մեծահասակները՝ այդ գործընթացում համահեղինակներ են, բ/ աշակերտը իրավունք ունի մասնակցելու իր կյանքին վերաբերող հարցերի քննարկմանը և դրանց վերաբերյալ որոշումներ ընդունելուն: ՈՒստի ,մոդելի կենտրոնում աշակերտն է՝ իրեն վերաբերող հիմնախնդիրներով , որոնց լուծմանն ուղղված յուրաքանչյուր բաղադրիչի իրագործմանը ուսուցչի և ծնողի հետ միասին հնարավորություն ունի մասնակցելու նաև ինքը: Մոդելի բաղադրիչները լրացնում են միմյանց և ինտեգրվում՝ դառնալով մեկ ամբողջություն:



3

Երեխաների անվտանգության ապահովման և իրավունքների պաշտպանության ոլորտում սերտ համագործակցության ապահովում: Դասվարի, երեխաների և ծնողների մասնակցությամբ դասարանական և դպրոցական կանոնների մշակում:

- Ուսուցչի կողմից աշակերտների ֆիզիոլոգիական և հոգեբանական անվտագության պայմանների քննարկում ծնողների հետ՝ դասարանական և ընտանեկան առողջ մթնոլորտ ստեղծելու , երերեխաներին պիտակավորելը և ծաղրելը բացառելու,դասարանի և տան հարմարավետությունն ու վալեոլոգիական պահանջները պահպանելու նպատակով: Համատեղ քննարկումներ տանը և դպրոցում Երեխայի ազատության և իրավունքների իրացման համար պայմաններ և հնարավորություններ ստեղծելու նպատակով:

4

Երեխաների ուսումնաճանաչողական ձեռքբերումների համատեղ քննարկում, խոչընդոտների բացահայտում և նրա հետ անհատական զարգացման աջակցման ծրագրի մշակում

- Ուսուցիչ-ծնող փոխադարձ տեղեկատվության փոխանցում և քննարկում՝ աշակերտների ուսումնադաստիարակչական նվաճումների, տնային և ինքնուրույն առաջադրանքների կատարման ընթացքում ծագած դժվարությունների և խոչընդոտների ու դրանց հաղթահարման վերաբերյալ:
- Աշակերտի համաձայնությամբ և ծնողի իմացությամբ աշակերտի անհատական զարգացման ծրագրի համատեղ մշակում՝ մանկավարժական աջակցության նպատակով:
- Ծնողական ժողովներին աշակերտների մասնակցության ապահովում:

5

Արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների, մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ դասվարի, աշակերտների և դասարանական ծնողական կոմիտեի համատեղ գործունեության պլանավորում և իրականացում

- Ուսուցչի նախաձեռնությամբ քննարկումների կազմակերպում ՝կամավորության սկզբունքով և ծնողների ընտրությամբ նրանց մասնակցությունը արտադասարանական և արտադպրոցական դաստիարակչական աշխատանքներին ապահովելու նպատակով:
- Ծնողների կողմից իրենց երեխաների օգնությամբ մասնագիտության օրերի դասարանական միջոցառումների շարքի կազմակերպում

6
Դպրոցի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման գործում ծնողական համայնքի մասնակցության ապահովում

- Ուսուցչի կողմից ծնողներին դպրոցի, դասարանի հոգսերին ծանոթացնելը՝ըստ ցանկության նրանց մասնակցությունը դպրոցի զարգացման ծրագրերի մշակմանն ու իրականացմանը ապահովելու նպատակով:

7
Դաստիարակչական միասնական միջավայրի ստեղծում և ընտանեկան ու դպրոցական դաստիարակության ինտեգրում

- Ծնողներին դաստիարակչական միասնական միջավայրի և ընտանեկան ու դպրոցական դաստիարակության ինտեգրման մասին գիտելիքների, գաղափարների և այլ տեղեկատվության փոխանցում, տանը և դպրոցում երեխայի նկատմամբ միասնական պահանջների,հնարավորությունների և պայմանների ներկայացում ու ստեղծում:

8
Կրթության հաջորդ աստճանների հաջորդականության ապահովում, համատեղ գործունեության իրականացում

- Ուսուցչի կողմից դպրոցի հաջորդ աստիճանի անցման խնդիրների բացահայտում և ծնողներին ու աշակերտներին խորհրդատվության մատուցում:
- Ծնողների հետ, երեխայի մասնակցությամբ,յուրաքանչյուրի կարիքների, մտահոգությունների, խնդիրների և ակնկալիքների քննարկում և որոշման ընդունում՝ կրթության հաջորդ աստիճանին անցնելու վերաբերյալ:

Միջազգային փորձը դպրոց – ծնող համագործակցության գործում

Դպրոց – ծնող համագործակցությունը ուսումնասիրության առարկա է աշխարհի բոլոր դպրոցներում: Այդ ուսումնասիրությունների արդյունքում մշակվել է ծնողների ներգրավվածության ծրագիր երեխաների կրթության գործում, որը ենթադրում է համագործակցություն դպրոցի հետ: Միջազգային փորձագետները առաջարկում են, որ դպրոցն ու ծնողը միասին դիտարկեն երեխաների ամբողջական վարքագիծը, որը հնարավորություն կտա նաև երեխային ոչ միայն լավ սովորել, այլ պաշտպանված լինել բուլինգից, կիբերբուլինգից և այլն: Այսինքն՝ ինչպես է իրեն զգում երեխան տանը, ինչ փոփոխություններ է նկատվում նրա վարքագծում, ինչպես է անդրադառնում երեխայի առաջադիմության վրա, ինչու է նա ավելի շատ ժամանակ անցկացնում սոցցանցերում: Հնարավոր է առաջադիմության թուլացումը պատճառ լինել հալածանքի /բուլինգ/ իր հասակակիցների կողմից, սակավ դեպքերում կարող է լինել նաև ուսուցչի մասնակցությամբ, հիմնականում՝ չիմացության արդյունքում: Մեր ժամանակներում մարդկանց կյանքում մեդիայի դերը գնալով ավելի մեծ տեղ է զբաղեցնում, իսկ այդ առումով մեդիագրագետ սպառող, պատասխանատու մեդիաստեղծող ունենալու համար կարևոր է երեխայի վարքագծի փոփոխությունը դիտել տարբեր տեսանկյուններից, որը վերահսկելու է ծնողը: Ծնողը պետք է հետևի, որ եթե երեխան տանն է, <<ապահով>> նստած է համակարգչի դիմաց, պետք է իմանա ինչով է նա զբաղված, և ինչքան ժամանակ:

Օրինակ. 2012 թվականի հետազոտման արդյունքների հիման վրա Վրաստանի տարրական կրթության նախագծի (G-PriEd) կողմից Վրաստանի Կրթության և գիտության նախարարությունը, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (USAID) հետ համագործակցելով, մշակեց ծնողների ներգրավվածության մոդել, որի նպատակն էր Վրաստանում աշակերտների առաջադիմության բարելավումը:

Ի՞նչ դժվարությունների են հանդիպում տնօրենները, ուսուցիչները և ծնողները

- Ծնողների բացասական վերաբերմունքը ուսուցման նոր մեթոդների նկատմամբ Ծնողների կողմից դաստիարակության ոչ ճիշտ մեթոդների կիրառում Դպրոցի կողմից ոչ լրիվ տեղեկատվության հաղորդում
- Ծնողների կողմից երեխաներին պակաս ժամանակի տրամադրում, Ծնողներին «անհասկանալի» դասագրքերը
- Աշակերտի ընտանիքի ծանր սոցիալական-տնտեսական պայմանները
- Ծնողների անվստահությունը ուսուցիչների նկատմամբ

Միջազգային փորձագետների հետազոտության արդյունքներից առավել կարևորվում են հետևյալ կետերը .

- Եթե ծնողները կապված չեն ուսուցիչների հետ կամ հետաքրքրված չեն դպրոցի առօրյա կյանքով, նրանց երեխաների ակադեմիական առաջադիմությունը մյուս երեխաների համեմատությամբ ավելի ցածր է:
- Երբ ծնողները ներգրավված են դպրոցի կյանքում, աշակերտներն ավելի դրականորեն են տրամադրված դպրոցի հանդեպ և սեփական անձի ու հնարավորությունների նկատմամբ ավելի շատ վստահություն ունեն:
- Այն աշակերտները, որոնց ծնողներն ակտիվորեն են ներգրավված դպրոցի կյանքում, ավելի լավ վարք ունեն, և նրանց դեմ կիրառված կարգապահական պատժամիջոցների միջին ցուցանիշներն ավելի ցածր են մյուսների համեմատությամբ:
- Դպրոցի կյանքին մասնակից ծնողների երեխաները ավելի լավ հարաբերություններ ունեն , ինչպես ուսուցիչների, այնպես էլ ընտանիքի անդամների հետ:

Ըստ իս, ծնող-դպրոց կապը չպետք է դիտենք ավանդական կերպով՝ կապված գնահատականի հետ, որը երեխան ստանում է այս կամ այն առարկայից: Դպրոցի կյանքում ծնողների ներգրավվածությունը առանձնահատուկ նշանակություն ունի աշակերտների հաջողության համար: Անկախ ընտանիքի սոցիալ-տնտեսական

կարգավիճակից՝ ծնողի մասնակցությունը երեխայի կրթության գործընթացին, աշակերտի զարգացման վրա մեծ ազդեցություն է գործում:

Ուստի մանկավարժները պետք է խրախուսեն ծնողներին, նրանց տեղեկացնեն, թե ի՞նչ է կատարվում երեխայի կյանքում, խոսեն այն ընթացիկ պրոցեսների մասին, որոնք կարող են ազդեցություն գործել դպրոցում երեխայի առաջընթացի վրա: Հանրակրթական հաստատությունը հստակ տեղեկություն պետք է հաղորդի ծնողներին սպասվող արդյունքների մասին, դպրոցի պլանավորած միջոցառումների, գոյություն ունեցող կարգապահական նորմերի, գնահատման գործիքների և դպրոցի նպատակների մասին: Տնօրենը և ուսուցիչը ծնողների հետ դրական հաղորդակցման կանոնավոր գրաֆիկ պետք է կազմեն: Երբ ծնողի և դպրոցի հաղորդակցումը կանոնավոր և արդյունավետ է, աճում է ծնողների ներգրավվածությունը, նրանց կողմից դպրոցի գնահատումը բարձրանում է և ձևավորվում է դպրոցի նկատմամբ դրական կապվածություն:

Եզրակացություն

Ժամանակակից արագ զարգացող և փոփոխվող աշխարհում, առաջ են գալիս նոր մարտահրավերներ երեխայի կրթության, որպես անհատ և սոցիումի անբաժանելի ու լիակատար անձ ձևավորման հարցերում: Այսօր շատ բան է փոխվել. փոխվել է ուսուցիչը, երեխան, ծնողը, փոխվել են նաև դաստիարակության նորմերը: Առավել քան երբևէ կարևորվում է դպրոցի և ծնողի համագործակցությունը: Ե՛վ ընտանիքը, և՛ դպրոցը ունեն մեկ ընդհանուր առաքելություն՝ դաստիարակել համակողմանի զարգացած և հասարակության լիարժեք ու կարողունակ անդամներ : Այդ պատճառով, բարոյական դաստիարակության նորմերը, ինչպիսիք են՝ մարդասիրությունը, նրբանկատությունը, գթասրտությունը, պարտքի զգացողությունը, հաղորդակցման կուլտուրան և այլն, նախ և առաջ սերմանվում են ծնողների կողմից ընտանիքներում, հետո միայն ձևավորվում և ամրապդվում դպրոցում:

Այս ամենը հաղթահարելու համար իսկապես օգտակար են, զանազան միջոցառումները, որոնք կվերաբերվեն ընտանեկան ծեսերին և ավանդույթներին, կուսուցանեն լինել ուշադիր շրջապատի և ընտանիքի անդամների նկատմամբ, կձևավորեն կարեկցելու, սատարելու, մարդու մասին հոգ տանելու և այլ կարևոր հատկանիշներ: Այսպիսով, բոլորիս գերխնդիրն է՝ ձևավորել բարձր արժեքային հատկանիշներով օժտված, հասարակությանը պիտանի անձ: ինչպես Հովհաննես Թումանյանն է ասել.
<<...Աշխարհում ամենայն բարձր կոչումը մարդ կոչումն է >> :

Դպրոցի կարևորագույն գործառույթներից է նաև ծնողներին մշտապես երեխայի վարքագծի, հոգեբանության, հանդուրժողականության, մեդիագրագիտության հարցերին իրազեկելը: Երեխան նաև կարող է խնդիրներ ունենալ ընտանիքում,որոնք կարող են պատճառ դառնալ և նրա վարքագծի փոփոխության ,և ուսման որակի վրա:: Ուստի կարևոր է, որպեսզի դպրոցը ժամանակին տեղյակ լինի նման խնդիրներից, և երկուստեք ջանքեր գործադրեն խնդրին արագ լուծում տալու և, որ ամենակարևորն է, աշակերտի համար մաքսիմալ դրական արդյունք ապահովելու համար:

Հետազոտական աշխատանքում ներկայացված միջազգային փորձի արդյունքների վերլուծությունից կարելի է գալ այն եզրակացության, որ աշակերտները, որոնց ծնողները ներգրավված են երեխայի կրթության գործընթացում, ավելի լավ արդյունքների են հասնում, ստանում են ավելի լավ գնահատականներ, ունեն ավելի բարձր ակադեմիական ձեռքբերումներ, աչքի են ընկնում դրական վարքով, բարեհամբույր են դպրոցի նկատմամբ և ունեն սեփական անձի ու հնարավորությունների նկատմամբ հավատ: Նրանք ավելի հաջողությամբ են ավարտում դպրոցը և ուսումը շարունակելու ավելի լավ հեռանկարներ ունեն: Ծնողների ներգրավվածությունը նաև հեշտացնում է կրթական հաստատության աշխատանքը:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ կրթության և գիտության նախարարության կրթական բարեփոխումների կենտրոն ‹‹Դաստիարակությունը դպրոցում›› Երևան 2003
2. Դալաքյան Ա.Հ., Դպրոց-ընտանիք համագործակցության ձևերը ժամանակակից դպրոցում, Մանկավարժության արդի խնդիրները մարտահրավերներ և լուծումներ, Հանրապետական գիտժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2015

3. Թովմասյան Լ., Ծնող-ուսուցիչ փոխհարաբերությունը և դրա ներգործությունը ուսումնական գործընթացի վրա, ‹‹Նախաշավիղ›› 5.2010

4. Բենջամին Սփոք ‹‹Երեխան և նրա խնամքը›› Երևան 1977
5. https://aspu.am/website/images/files/ntaniq-dproc%20hamagorcakcutyan%20model.pdf?fbclid=IwAR1R8vqMeg1KLkX1_GT96UbRRI54Od7DMLkbFIDbe1HHh1sChstpyUhXYxc

6. http://kargiskola.ge/parent/pdf/PE_GUIDE_Armenian.pdf?fbclid=IwAR2SR03XkFzbJQqPI5FkUg1XQ1GBKL3fuHTdmPBP7SMb1-tnTX-RCf7XQxg